



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԼՈՒԱԼՈՒԵՐՈՒ

Երրորդ տարի 19 Ապրիլ 1913 Թիւ 91

«Մերական Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շարքաբերքը շարունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի զաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մալքանաց արդիւնաւորութեան համար Մերական Հայրն արագին կ'օրհնէ յիշեալ Շարքաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կաթ. Մէրի սէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ. Թեղեմաս, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ, 23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուսմանաւ:

ԴԵՊԱՐԵՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

1. Գրիսեռ աղէտը:— 2. Աղէտայի գիրք մը:

(Շար.)

2. Աղէտայի գիրք մըն է, այո՛, որ վերջերս լոյս տեսաւ հայ հրապարակին վրայ:

Ո՛հ, հայ հրապարակը, ողողուած գրեթէ միշտ յոռի տպագրութիւններով.— աննկարագիր, անսկզբունք, չահամուղ, անխիղճ մարդոց ձեռքը մատնուած հայ գրական հրապարակը, այսինքն՝ հայ մանկտին՝ յոյս ազգի, spes gregis! հայ մատղաշ մանուկներ, հայ ընտանիքը, հայ սերունդը, հայ սիրտը, հայ միտքը, հայ ազգը, մատնուած անբարոյութեան, կրքերու, վատասերման, անկրօնութեան, անճիտութիւնի. հայ ձեռքեր կը մատըռ-

ուակեն այդ թունալից բաժակը. ու ազգա-
ւէր կը յորջորջուին... վա՛յ մեզ:

Ուրեմն այդ տեսակ գիրք մը հրատարակուեցաւ վերջերս: Գրքին անունն է՝ հեքանոսական երգեր. հեղինակն է՝ Դանիէլ Վարուժան. Վարուժան՝ որ արտմագին կ'ողբայ իր Աստուծոյն կորուստը, վերագրելով զայն անպիտան ու անկրօն գիրքերու ընթերցու-
մին:

Խոժո՛ն գիրքեր, մե՛ծ գիրքեր...

..Կ'անիծեմ քարոտեօրէն քոյրերիդ...

Ո՛վ խաբէքայ գիրքե՛ր, գիրքե՛ր մահաբոյր,
ես կը սեւեւեմ որ ինձի

Ոչինչ տըխիս, առիս ամեն քա՛ն ինձե՛ն...

Եւ ջընջեցիք Աստուծու...

(Դիւրեւորուց մէջ)

Մ, ի՛նչ հարկ նոր մը աւելցնել այդ ա-
նիծուած գիրքերուն վրայ, որոնք այն ճշ-
մարիտ Դերաներն են որ իր գլուխը քարկոծե-

ցին յար (Ճան . Խաչի) . . . Օ , այդ տղամալից
ու մահաբոյր գիրքերու , որոնց պատճառա-
կու լայ թէ՛

Գերեզմանն եմ իմ առջիս
Որ իր քոյնով քունաւորուած գերդ կարիճ
Այրեցաւ իր իսկ կրակին
Կը մնայ Վիշտ աննուաճ եւ Յուսահատութիւնս աննահ;
(Տրեւիզօ)

Ինչու այդ համայնաջինջ գիրքերուն թիւն
աւելցնել , և իր մահը սփռել համաճարակ ,
անփոյթ անգթութեամբ . . .

Սրտի կակծալի սեղմումով և հոգւոյ ան-
վերջ թախիծով է որ կը գրենք այս մի քանի
տողերը , սթափեցնելու համար անգգոյշները .
քանզի մեզի համար կարծուածէն շատ աւելի
աւագ կարեւորութիւն ունի այդ գրքին հի-
մա հրատարակուիլը :

Այդ գիրքը՝ ընդհանուր բարոյականի ե-
րեսը նետուած հեղինակեան ափ մը ցեխն է .
իւր հիմը կազմող Անհաւատութեան և Յու-
սահատութեան դաշտին վրայ բուսած թու-
նալից և հրապուրիչ ծաղիկներ կը պարու-
նակէ . ծաղիկներ՝ ճաշակաւոր տպագրու-
թեան , հուժկու բանաստեղծութեան , կան-
խամտածուած պէսպիսութեանց , զանազան-
եալ ոճի , հմայիչ երանգներու , չափաւորու-
թեան , արդեստական այն ամէն բանի , որ
կարող է յանկուցանել անգգոյշ երիտասար-
դութիւնը , գթեցնել , մեղցնել . ոսկեզօծ և
գոհարազարդ դաշոյն մըն է : Քանի մը ար-
ժէքաւոր կտորներու քով՝ լիարուռն ցան-
ուած են այնպիսի եւ ամենքն յայտնի ան-
բարոյական , յետին աստիճանի անբարոյական
կտորներ , որ մենք պիտի չկարենանք ընել
մեջբերումներ (citations) . . . ներուի մեզ .
այնքան լի է ամենալիւր իրապաշտ պղծու-
թեամբ եւ գրգռիչ նկարագրութեամբ . Չո-
լայական դպրոցի հարազատ մէկ ծնունդն է :
Պիտի ըսենք մէկ բառով , թէ այդ գիրքը՝
ըստ մասին՝ անբարոյութեան և ըստ մասին՝
անասունաւորութեան ոգւոյն փա-
ռաբանութիւնը , ասունաւորութեան է : Այդ
գիրքը ահաւոր հայեցութիւններ ալ կը բո-
վանդակէ . որոնց մէջէն անհունօրէն քրտո-
մնեցուցիչ են՝ Օրնեալ եւ դու ի կանաչախ
ամբարիշտ մերձեցումը , Մեռած Ասունածնե-

րունը , Ասունծոյ լացը . . . ևն . ևն . Լոկնք ,
լաւ ևս է :

Երբ ա՛յ դասարկ ե հոգին,
Ահաւոր ե քեանի յասակը անոր . . .

Եւ ահա հայ հրապարակը . ծափ գծափի
կը հարկանէ , կը փառաբանէ , Երեկոյթներ .
Ասուլիսներ կը սարքէ ի պատիւ հեղինակին .
այդ հայ հրապարակը կ'ապացուցանէ իր ար-
ժէքը : Բայց անդին Մեհմուտ ալ գործի կը
խառնուի , Մեհմուտ , որ իր ըսելովը կաթո-
ղիկէ է եղեր , եկեղեցւոյ և կրօնքի ծառա-
յեր է եղեր , ևն . աւա՛ղ փառացս անցա-
ւորի . . . Տեսէ՛ք , ո՛վ արդարադատ և ճշմա-
րիտ Կաթողիկէ հաւատացեալներ , առ ձեզ
են բանես , տեսէ՛ք իր 5065 թիւին մէջ ի՛նչ
կը դրէ այդ ապաժաման թերթը , այդ զրժ-
բախտ գրքին մասին , տեսէ՛ք եւ սարսեցէ՛ք .

Հեթ՝ԱՆՈՍ ԵՐԳԵՐ . — Իսեպայր միլիմիզէն
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Ուսումնարանը միւսիւրի Դա-
նիէլ եմ . Վարուժանն ախրէն քէլիմ իլ՝ քապ վե-
նէր իքսիկի վէ պիր նիւսխէսիքի քարաքարապա հիպէ
իլէսիկի Հեթ՝ԱՆՈՍ ԵՐԳԵՐ նամ էտեր նեժիս , ման-
գուրմիզ օլսու : Իլանիլէք , թիւանէք , քապիաքնն էն-
վաի խասաիլինէ միւքէալիզ կիւզէլ շիրլէսէն միւ-
րէֆէկ օլան պու էտեր . . . Շայանք գրապ վէ միւքա-
լէա օլանալէ . . . էտեր մեգիւր միլլէրիմիզ էրպայր
նիքապէրինէ քապիլէ իսէրիզ :

Ուրեմն ինքնասաց ճշմարիտ կաթողիկէ
Մեհմուտ ուրախութեամբ կարդացեր է այդ
գիրքը , հաւնէր է , Աստուծոյ եւ հաւատքի
շատ յարմար գտեր է , ընթերցումի եւ խո-
կալու արժանի գտեր է . հետեւաբար կը
յանձնարարէ զայն : — Յիրաւի՛ նողկալի .
յուսահատական բան . . .

Բայց չուտով չանցնինք . իր մէկ ոճը
պէտք է դիտենք . Ս. Գր. Լուսաւորիչ Ու-
սումնարանին Տնօրէնն է Վարուժան . այո՛ ,
Վարչ . ըսուած բանադրեալ ժողովոյ կող-
մանէ անամօթաբար յափշտակուած այդ Ու-
սումնարանին Տնօրէն գրին Դանիէլ Վարու-
ժանը . և մենք , երբ՝ այդպիսի անարժան
գործի մը համար կարեւիւր խոցուած և ի
խղճէ պարտաւորեալ , արդար չեշտերով
քննադատեցինք՝ կաթողիկէ անուան նա-
խատինք եղող այդ անորակելի արարքը , ան
ատեն այսպանեցին զմեզ , — որովհետեւ
կ'այսպանեն այն ամէնքը որ չեն զիջանիր ի-

րենց ըմբոստութեան, անխղճութեան ու սրբապղծութիւններուն: Եւ Դանիէլ Վարուժան, որ՝ ինչպէս կ'երեւի, միայն տեսլապաշտ քերթող չէ, այլ եւ քաջ բռաքիֆ մարդ, երախտագէտ գոնուեցաւ այդ բանադրուած ժողովին. անոր բարերարութիւնը փոխարինեց նա՝ անիրաւ դատին համար մարդկով իր սաները, խռմբ կազմելով Ուսումնարանի աշակերտներէն, յորդորներով եւ խրատներով կազմակերպելով զանոնք եկեղեցիներու մէջ սուրբ սեղաններու եւ քահանաներու վրայ յարձակելու, սրբավայրերու մէջ սրբապղծ աղաղակներ բառնալու, ոտնակոխ ընելու ամէն սրբութիւն... եւ ինքը՝ Դանիէլ Վարուժան առաջնորդեց ամէն անգամ իր կաթողիկէ սաները այդ սրբապղծ շահատակութիւններու, եւ ինքն ալ ծափահարուեցաւ՝ այդ սրբապղծ ցուցարարներէն, խռովարար ձառեր արտասանելով: Այո՛, բանադրեալ ժողովը, ինքնաքալող կաթողիկէ ժողովը, որ Ս. Քահանայապետին շարունակ կ'անսաստէ, Ուսումնարանի Տնօրէն կարգեց Դանիէլ Վարուժանը, որ Դաշնակցական է, որ Ընկերվարական է, որ անաստուած է. այդ ժողովը Վարուժանին ձեռքը յանձնեց մեր կաթողիկէ անմեղ ու մատղաշ տղայոց դատաւարակութիւնը, սիրտը, հոգին, կեանքը, կրօնքը, արքայութիւնը. Վարուժանը տէր կացուցին այս ամէնուն:

Հիմա՛ զիրենք միշտ կաթողիկէ անուանող այս էֆ հերուն, Վարուժանի պաշտպաններուն, կ'աղաչենք որ պահ մը ձեռքերնին դնեն խղճերնուն վրայ, եթէ ունին, եւ կը հարցնենք հանդիսաւորապէս.

Թոյլ պիտի կարենա՞ն տալ որ իրենց սիրանունդ զաւակները, յանուն գրականութեան, փնտռեն գնեն իրենց սիրելի Տնօրէնին այդ հատորը եւ կարգան անոր մէջ, օրինակի համար, սա կտորները. Հերանոսական, Ո՛ Տալիդա, Արեւելեան բաղանիփ, Աւաջին մեղքը, Լիւմ, Եւն. Եւն.:

Եթէ՝

...Միշտ ֆենդաւսն եւ միայնայ,
Եւ ճերմակի՛ քարոյսցիցք խոնկո՛ւ—

անշուշտ մարդասպան է այդպիսի հեղինակ

մը, եւ իր ընթերցողն, ու մանաւանդ իր զաւակը, այդպիսի հեղինակի մը յանձնող հայր մը՝ անխիղճ են եւ ամենակոյր անձնասպաններ:

Աղէտ մըն է, ոճիր մըն է այդ գիրքը:

ԺԶ. ՀԱՐԻԻՐԱՄԵՆԱԿ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԻՆ

BULLETIN

Անցեալ տարի, հոկտեմբեր ամսուն, չքեղ եւ մեծապայծառ հանդէսներով կատարուեցաւ Հոռոմի մէջ Կոստանդինեան Յորելեանին բացումը. որովհետեւ տամուզեց զար առաջ 312 Հոկտեմբեր 28ին Մեծն Կոստանդիանոս Մաքսենտիոսի յաղթելով հիմ դրած է Եկեղեցւոյ խաղաղութեան եւ ազատութեան: Սակայն բուն Յորելեանը այս տարի է, 1913ին, քանի որ Կոստանդիանոս 313ին, զարնան, Միլանի հռչակաւոր հրովարտակով պաշտօնապէս ազատութիւն չնորհեց Եկեղեցւոյ:

Արժան է որ այս յորելեան տարւոյն մէջ խօսինք սոյն ցանկալի դարադարձին վրայ, ուր կը յիշատակենք եւ կը տօնախմբենք Քրիստոսի եւ իր Խաչին հեթանոս աշխարհի վրայ տարած յաղթանակը, Հոռոմի զերծումը՝ վաղիմի մոլորութեան եւ խժոժութեան շղթաներէն, Եկեղեցւոյ ազատութեան հռչակումը, ժամանակաւոր եւ հոգեւոր իշխանութեան հաշտութիւնը, մէկ խօսքով մեր եւ բոլոր քրիստոնեայ ժողովրդոց տօնը:

Քրիստոնէից դէմ հանուած վերջին ամէնէն արիւնդուշտ եւ սոսկալի հալածանքը, 312ին կը շարունակուէր միայն Արեւելքի քանի մը գաւառներուն մէջ՝ Մաքսիմիանոս բռնաւորին հրամանաւ: Բայց զայն հրատարակողներուն եւ թելադրողներուն գլխաւորները արդէն անհետ եղեր էին աշխարհիս տեսարանէն՝ չատ ողբերգական եղանակներով: Մաքսիմիանոս անձնախնդդ եղած էր Արլի մէջ, 310ին, ակամայ ձգած կայսերական ծիրանին նորէն ձեռք բերելու վայրապար փորձ մը ընելէ յետոյ: Յաջորդ տարին, Դաղերիոս

համակ որդնակեր հղած, և յոյսը միայն քր-
րիստոնէից Աստուծոյ զօրութեան վրայ դրած,
հրատարակեր էր կրօնական թոյլտուութեան
հրովարտակ մը: Միայն Դիոկղետիանոս կ'ապ-
րէր տակաւին, որպէս զի տեսնէ Սալոնի մե-
նարանէն, իր ձեռնարկին ամբողջական քայ-
քայումը և քրիստոնէութեան վերջնական
յաղթանակը:

Արեւմուտքի կառավարութիւնը բաժ-
նուած էր Կոստանդիանոսի և Մաքսենտիոսի
միջեւ, որոնց վրայ կը տեսնուէին ի-
րենց հայրերուն յատկութիւնները. առաջի-
նին վրայ՝ Կոստանդոս-Քլորոսի արիւթիւնն
ու չափաւորութիւնը. երկրորդին վրայ՝ Մաք-
սինիանոսի բրտութիւնն ու անգթութիւնը:

Մաքսենտիոս իր աշխարհակալութեան
փափաքին իրագործման արգելք նկատելով
Կոստանդիանոսը, պատրաստուեցաւ անոր
դէմ պատերազմի ելլելու, և դաշինք կռեց
Մաքսինիանոսի հետ: Կոստանդիանոս ալ
պատերազմի պատրաստուեցաւ. բայց փո-
խանակ Գաղղիոյ մէջ իր թշնամիին սպասե-
լու, միտքը դրաւ յանդիմարէն Իտալիա յար-
ձակել: Սակայն երկու կողմի ուժերը հաւա-
սար չէին. որովհետեւ, եթէ չուզենանք ըն-
դունիլ Կոստանդիանոսի մէկ ներքողաբանին
վկայութիւնը, որ կ'ըսէ թէ անոր զօրքը
քառապատիկ նուազ էր Մաքսենտիոսի զօր-
քէն. կրնանք հաւատք ընծայել Զոզիմոս
հեթանոս հեղինակին, Կոստանդիանոսի ոսո-
խին, որ կ'ըսէ թէ՝ անոր զօրքը Մաքսեն-
տիոսի զօրքին հազիւ կէսը կար:

Կոստանդիանոս քաջ տեղեակ ըլլալով այս
ուժերու անհաւասարութեան մեծ անձկու-
թեան և տագնապի մէջ կ'իյնայ. կը դիմէ
երկնի և երկրի գերագոյն Աստուծոյն, և կը
խնդրէ անկէ որ իրեն զօրավիգն ու օգնա-
կան ըլլայ: Իբ ջերմ պաղտամանքը լսելի ե-
ղաւ. և իրեն և բոլոր բանակին երեւցաւ
Խաչը՝ ցոլցուն և շողափիւռ սա լուսաղբ
խօսքով. ԱՅՍ ՆՇԱՆՈՎ ՊԻՏԻ ՅԱՂԹԵՍ:
Ապա այս խօսքը տեսիլքի մը մէջ աւելի ևս
բացատրուեցաւ կայսեր, և հրամայուեցաւ որ
Խաչին նշանը գրողմուի գրօշակներուն վրայ:
Կոստանդիանոս առած հրամանը կէտ առ կէտ

ի գործ դնելով վստահ եղաւ հաստատապէս՝
թէ ինք աստուածային պաշտպանութեան
տակ է եւ միշտ պիտի յաջողի, Խաչադրօշին
(Labarum) հովանիին ներքեւ, պիտի յաղ-
թէ Մաքսենտիոսի և ուրիշ ամէն թշնամիի,
և բան մը իրեն անկարելի պիտի չըլլայ:

Եւ իրօք, Խաչադրօշը պարզած՝ կտրեց
անցաւ Ալպեան լեռները, և յաղթեց Մաք-
սենտիոսի բանակին Սուլպի մէջ, եւ ապա
Թուրինի մօտ: Անկէ քնաց Միլան, և զայն
գրաւելով տիրեց գրեթէ ամբողջ անդրապո-
ղոսեան Իտալիոյ: Առանց կանգ առնելու,
ինկաւ թշնամիին ետեւէն, յաղթեց անոր
Քրէսկիայի եւ Վէրոնայի մէջ. արշաւեց ա-
րագօրէն Հռոմի վրայ, ուր իրեն կը սպասէր
Մաքսենտիոս, որ յոյսը դրած էր իր դեռ ևս
հզօր բանակին եւ քաղաքին ամուր պա-
րիսպներուն վրայ:

Մաքսենտիոս Հռոմէն անոր դէմ զրկեց
իր բանակին մէկ կարեւոր մասը եւ քիչ վերջը
ինք ալ, կամ ժողովուրդէն ստիպուած, կամ
խարուսիկ պատգամներէ գրգռուած, պարիս-
պէն զուրս ելաւ պատերազմելու. Կոստան-
դիանոս, ի նշան՝ Խաչին նկատմամբ ունեցած
վստահութեան, իր վիճակորաց վահաններուն
վրայ եւս քանդակել տուած էր զայն: Բուռն
ճակատամարտէ մը վերջը, Մաքսենտիոսի
զօրքերը փախան, հետերին առնելով իրենց
հրամանատարը՝ որ, Տիրերիսէն անցնելու տա-
տեն, երբ անոր վրայ ձգուած նաւակա-
մուրջը խորտակեցաւ փախտէից խուռն
բազմութեան տակ, գետը ինկաւ եւ խղղուե-
ցաւ: Իր գիակը ջրէն հանեցին եւ գլուխը
կտրեցին. որպէս զի յաղթութեան նշան ըլ-
լայ Կոստանդիանոսի, որ յաջորդ օրը յաղ-
թանակաւ Հռոմ մտաւ:

Կոստանդիանոս իր տարած յաղթութեան
համար Աստուծոյ շնորհակալ ըլլալով, իր
Լիկինիոս կայսերակցին հետ միատեղ անմի-
ջապէս Հռոմի մէջ ընդհանուր թոյլտուու-
թեան հրովարտակ մը հանեց, հրաման չնոր-
հելով քրիստոնէից, ինչպէս ուրիշ ամէն
կրօններու, հրապարակաւ. ժողովներ ընելու և
նոր եկեղեցիներ շինելու: 313 Յունուար 18ին
Կոստանդիանոս Միլան գացեր էր իր Կոս-

տանգա քոյրը Լիկինիոսի հետ ամուսնացնելու համար. հոն երկու կայսերք հրատարակեցին նոր հրովարտակ մը, որով կու տային Քրիստոսի եկեղեցւոյն ճշմարիտ եւ անթերի ապատուութիւն՝ հետեւեալ խօսքերով.

Մենք, Կոստանդիանոս Օգոստոս եւ Լիկինիոս Օգոստոս, բարեբախտաբար միացած Միլանի մէջ՝ հասարակաց ապահովութեան վերաբերեալ խնդիրներու վրայ խորհրդակցելու համար, համարեցանք թէ մեր առաջնակարգ պատճեռն էին Է կարգաւորել, ինչ որ աստուածութեան պաշտամունքին կը պատկանէր, եւ այս ֆրիսունէից, ինչպէս նաեւ մեր միւս բոլոր հպատակներուն, ազատութիւն իրենց կրօնին հետեւելու, երկնից պարգեւները մեր եւ բովանդակ կայարութեան վրայ հրաշխարհելու համար: Այս նպատակով որոշեցինք եւ ոչ մէկու մը զլակալ, իր յօժարութեան համեմատ, ֆրիսունէից օրհնական հետեւելու, ինչպէս նաեւ իրեն յարմար համարած պաշտամունքը կատարելու իրաւունքը. որպէս զի գերագոյն Աստուծոյ, զոր մենք կը պատմենք, շարունակեալ գլխով իր շնորհներով շնորհէ:

Ուստի զիցցած ըզբաւ որ չնայելով ձեր կակիսաւ առած ու եւ հակառակ գրութեան, այսուհետեւ ով որ ուզենայ՝ կրնայ ֆրիսունէական կրօնը դաւանիլ, առանց երկիւղի՝ աւոր համար չարկուելու կամ ու եւ կերպով ներդրութիւն կրելու: Զայս ձեզի կը յայտարարենք պաշտօնապէս, ձեզի տեղեկացնելով որ ընդհանուր կերպով շնորհեցինք ֆրիսունէից՝ իրենց կրօնին հետեւելու շիսկասար իրաւունք:

Ասկէ զիստ աստիճանեցինք ի նպատակ իրենց՝ որ այն տեղերը ուր աւանդով կը ժողովուրդէին, որոնց մասին անցելոյն մէջ զանազան հրամաններ աւեր էին, եւ որոնք գնումով կամ նուիրատուութեամբ անհասկերու ձեռք անցեր են, վերսին տուին իրենց հին տեղերուն, անուպաղ, առանց դժուարութեան եւ առանց բոյսայութեան որ արմուկի զանախ տեսութեան կամ ու եւ մէկու մը կողմէ հաստատեան խնդիր մը իբրեւ արգելք մէջտեղ հանուի: Զանոնք իբրեւ նուր ընդունողները եւ դարձնելու են ըստ կարի փութով, եւ զաւառի տեղակային դիտելու են այն ստացազիւկ սեփականատէսք, որպէս զի

առնուն իրենց վնասուց հաստատուր, զոր մեր բարութեանն ակնկալելու են:

Ուստի այսպէս իսկ եւ իսկ ֆրիսունէից ընկերութիւնը տէր պիտի ընէք այդ առեւ տեղերուն, եւ եթէ յայտնի ըզբաւ որ ուրիշ ինչքեր ալ կը պատկանին իրենց հասարակութեան, այսինքն եկեղեցիներու եւ ոչ թէ առանձնականներու, պիտի եւ դարձնել տաք հասարակութեան մասնունց, անոր բոլոր ինչքերը, առանց ընդունելու ու եւ ինչ կամ ընդդիմութիւն. աւելայն զանոնք ձրիաբար եւ դարձնողներուն բոլոր պիտի տաք որ մեզի դիտեն եւ իրենց վնասին արդար հաստատուր ընդունին:

Այս առեւանք մէջ կ'ուզենք որ ձեր պաշտօնը ի զորձ ղեկք առեւանք ազդու եւ անխնայական եղանակաւ, որպէս զի աստուծային բարութիւնը, որուն շնորհներուն փորձը աւեր ենք արդեն այնչափ պարագաներու մէջ, չդադրի յաջողութիւն պարգեւեղէ մեզի եւ մեր ժողովրդը:

Եւ որպէս զի այս հրովարտական առեւանք տեղեկ ըզբաւ, առեւ տեղ փակցնել տուէք զայդ, սովորական ձեւով, այնպէս որ ոչ ոք կարենայ զայն անգիտանալու պատճառով ունենալ:

(Շարունակելի)

ՕՐՄԱՆԵԱՆԻ

ՅԱՅՈՅ ԵԿԵՂԵՑԻ, ԳԻՐԲԸ (*)

Դ.

(Շար.)

Բ. Սկզբունք. — Եկեղեցական պատմութիւնը, երբ աւելի հաստատուն փաստեր չի գտնուիր, կը գոհանայ առաւելագոյն հաւանականութեան փաստերով, աւանդութեանց վրայ հիմնուած պատմագրութեան ընդունելով եւ շարունակութեամբ հաստատուած եղելութիւններով: — Բնականաբար այս սկզբունքն ալ Է մերկացնելով իմաստակութիւններէ դիտել իր ուղիղ գծին վրայ: Անշուշտ ինչպէս ամէն պատմութիւն՝ նոյնպէս եկեղեցականը՝ իր եղելութիւնները հաւաստել ուզած ատեն՝ կը փնտռէ նախ հաստատուն, այսինքն վաւերա-

(*) Տես թիւ 88, էջ 498:

կան, ստուգապատու՞մ և դրական ապացոյ-
ցներ և ասոնցմով հաստատած եղելութեան
համար կ'ըսէ սոցյգ, հաստատուն ու անհերքելի
Բայց երբ միայն առաւելագոյն հաւանակա-
նութեան փաստեր կ'ունենայ ի նպաստ եղե-
լութեան մը, զայն՝ հաւանականութեան սահ-
մանէն վեր չի հաներ և չըսեր, Օրմանեանի
ըսածին պէս, թէ այդ սոցյգ, հաստատուն ու
անհերքելի է: Հետեւաբար հոս ալ Օր-
մանեան իր բերնով կը դատապարտէ զինքն:
Վասն զի Բարդղիմէոս և Թադէոս Առաքե-
լոց ի հայս քարոզութիւնն (իր կողմէն խօ-
սելով) կը մնայ միշտ հաւանականութեան
մէջ՝ լոկ աւանդութիւն մը, չի կրնար ան-
հերքելի ստուգութեամբ ապահովել Հայ Ե-
կեղեցւոյ ուղղակի առաքելական ծագումն:
մնալով սա, այդ պարագային, միայն հաւա-
նական և ո'չ աւելի բան մը: Թո'ղ որ Բար-
դղիմէոսի ի Հայս քարոզութեան աւանդու-
թիւնը շատ վերջերը յերկրորդած է և Թա-
դէոսինը՝ այնքան վիպական պարագաներու
և վիճելի դէպքերու կապուած է, որ կարե-
լի չէ ո'չ մէկով Հայ Եկեղեցւոյ առաքելա-
կանութիւնն ու անկախութիւնը հաստատել:
Զգացած է Օրմանեան այս հիմերու անհաս-
տատութիւնն և անոր համար կանխել ու-
զած է ընթերցողին միտքը առջեւնիս եղած
սկզբունքով. այսինքն թէ պատմութիւնը
ստոյգ փաստ չգտած ատեն՝ հաւանականով կը
գոհանայ. բայց չէ ուզած հաւատարիմ մնալ
այս սկզբունքին, անցնելով հակասութեն և ի-
մաստակօրէն հաւանականէ առ ստոյգն, առ
անհերքելին. և ուզած է բացէն պատճառա-
բանել այսպէս. Բարդղիմէոս և Թադէոս
Առաքելոց ի հայս քարոզութիւնն հաւանա-
կան է, ուրեմն սոցյգ է եւ անհերքելի Հայ
Եկեղեցւոյ ուղղակի առաքելական ծագումը:
Ժայռայեղութիւն չկարծուի ըսածնիս. գիրքը
հրապարակի վրայ է. ուշադրութեամբ ըն-
թերցողը կրնայ տեսնել այս իմաստակութիւ-
նը:

Ինչ մը աւելի մանրամասնաբար վերլու-
ծենք դրուած սկզբունքը, որպէս զի լաւ ևս
տեսնենք Օրմանեանի դրած սկզբունքի առ-
ձգութիւնն և նոյն իսկ անոր հանգէպ իր ան-


հաւատարմութիւնն: Անցած գացած եղելու-
թիւններէն ամէնքն հաւատար՝ արժէք չեն
ունենար պատմութեան առջեւ. ոմանք ըս-
տոյգ և հաստատուն փաստերու վրայ հիմ-
նուած ըլլալով՝ ստոյգ կը նկատուին, ուրիշ-
ներ հաւանականագոյն կամ պարզ հաւանա-
կան կ'ըլլան ըստ որում աւելի կամ նուազ
վստահելի ապացոյցներու կոթնած են: Ա-
ռաջիններն անվիճելի կ'ըսուին և տարակու-
սի չեն կրնար ենթարկուիլ. երկրորդները
կրնան վիճելի ըլլալ և ներհակ կարծիքներու
բախիլ: Արդ ըլլայ եկեղեցական, ըլլայ քա-
ղաքական պատմութիւն մը, երբ ի նպաստ
եղելութեան մը դրական ու պատմական
հաստատուն փաստեր չի գտներ՝ երբէք այդ ե-
ղելութիւնը ստոյգ չի կրնար համարիլ. ա-
ռաւելագոյն հաւանականութեան փաստերն
նոյն եղելութիւնը հաւանական միայն կըր-
նան ընել. բայց երբէք չեն կրնար գոհացնել
ուղիղ Եկեղեցական պատմութիւնը կարծել
տալու համար իբր հաստատուն, ստոյգ և
անհերքելի եղելութիւն մը, որ միայն հաւա-
նականութեան վրայ հիմնուած է, որքան ալ
առաւելագոյն ըլլայ այդ հաւանականու-
թիւնը: Մէկ խօսքով հաւանականութեան
վրայ հիմնուած համոզումը՝ կարծիք կ'ըլլայ,
բնաւ սուղօքսիւն չըլլար: Եւ մեր խնդրոյն
մէջ՝ որպէս զի կարելի ըլլար Օրմանեանի ու-
զած ապահովութեամբ Հայ Եկեղեցւոյ Առա-
քելականութիւնը հաստատել, անշուշտ չի
բաւեր կարծիք մը, որքան ալ բուն բացա-
տրութիւններով շեշտուի, հռչակուի, քանի
որ այդ հաստատող կարծեաց դէմ կեցած է
մերժող կարծիքը, որ գէթ հաւասարապէս
հաւանական նկատելու էր. թո'ղ որ ստոյգ
պատմութեան առջեւ, հակառակ Օրմանեանի
բոլոր համոզողական ճիգերուն, խնդիրը լուծ-
ուած նկատուի է. այսինքն թէ իր տեսու-
թեանց կողմն ո' և է պատմական ստուգու-
թիւն չկայ, եւ ատոր ինքն ալ հաւանելու
է, քանի որ իր կարծիքն առաջ չբերած
պէտք կը զգայ մեր քննած սկզբունքը հիմ-
նելու իր պատճառաբանութեան. Եկեղեցա-
կան պատմութիւնը երբ աւելի հաստատուն
փաստեր չի գտներ կը զոհանայ առաւելա-

գոյն հաւանականութեան փաստերով: Անշուշտ Օրմանեան այս չափով ըսէր եթէ ձեռքը ունենար հաստատուն փաստեր. չափով մտահոգէր իր եկեղեցւոյն ծագումն անթափանցելի վարագոյրի և հետազոտութիւններէ խուսափող ծածկութեանը վրայ: Ըսել է թէ ինքն ալ գիտէ հաստատուն փաստեր չունենալը, և շատ շատ կը կարծէ հաւանականութեան փաստեր ունենալ: Արդ ի՞նչպէս գլխոյն սկիզբը հաւանականութիւն եղողն ստուգութեան կը փոխուի, անթափանցելի վարագոյրը կը վերցուի, ու հետազոտութիւնէ խուսափող եղելութիւնն՝ այնքան տեսանելի ու շօշափելի կ'ըլլայ անհերքելի ըսուելու չափ: Թէ ունենար Օրմանեան հաստատուն փաստեր, ստոյգ, հաստատուն և անհերքելի բառերէն զօրեղագոյն բացատրութիւն պիտի գտնէ՝ բնածն հաստատուելու համար: Անշուշտ ո՛չ. ըսել է թէ իրեն համար հաւանականութիւն և ստուգութիւն, կարծիք և ճշմարտութիւն հոմանիշ են:

Օրմանեան՝ հաւանականութեան բան մը աւելցողած կը կարծէ աւանդութեանց վրայ հիմնուած պատճառաբանութիւններով: Արդեօք այս պատճառաբանութիւններն ալ հաւանականութեան փաստերու մէջ բովանդակուած չէ՞ն կրնար նկատուիլ: Ինքը լաւ գիտնալու է որ աւանդութիւններն ալ կըրնան նուազ կամ աւելի պատմական ստուգութիւն ունենալ և կամ երբէք չունենալ կամ լոկ հաւանական ըլլալ. այդ աւանդութեանց վրայ հիմնուած պատճառաբանութիւններն ալ բնականաբար ըստ այնմ արժէք պիտի ունենան: Եթէ ուրեմն աւանդութիւնը սխալ է կամ անհիմն կամ լոկ հաւանական, չի կրնար ո՛ր և է պատճառաբանութիւն զայն ստուգութեան տանիլ: Կը հասկնանք որ պատմական եղելութեան մը հետի գըտնուող և առերեւոյթ անտարբեր աւանդութիւններու և յիշատակարաններու վրայ քննադատօրէն եղած պատճառաբանութիւններ կրնան տանիլ ստուգութեան. բայց ենթադրելով միշտ որ աւանդութիւն և յիշատակարան պատմականօրէն ստոյգ ըլլան և ոչ լոկ հաւանական ու կարծիքական: Դարձեալ

գիտենք որ նոյն իսկ սխալ աւանդութեանց մէջէն քննադատ միտքը կրնայ սխալ կողմերն մէկզի առնելով ստուգութեան ու ճշմարտութեան պարագաներ մը քաղել և անոնց վրայ պատճառաբանելով հասնիլ ճշտօրէն և ղեկութեան: Բայց այդ պարագային ալ երեւան հանելիք ստուգութեան ու ճշմարտութեան պարագաներն գտնուելու են: Արդ մեր խնդրոյն մէջ կը հարցնենք Օրմանեանի՝ որ մէկ պարագաներն ստուգապէս ճշմարիտ են իր յիշած աւանդութեանց մէջ, որ այնքան վստահ եզրակացութեան կը յանգի: Ս. Բարթոլոմէոսի և Թադէոսի գերեզմանները. բայց ասոնք ապացոյցի պէտք ունին պատմական ըլլալու համար, և զատնք մէջ բերել իբրեւ ապացոյց՝ ապացուցանելիքն կըրկնել ըսել է ուրիշ բառերով, որ խնամատակութեան մէկ ձեւն է և տրամաբանութեան մէջ (petitio principii) սկզբունքի կրկնում կը կոչուի:—Բարդղիմէոս Առաքելոյն ի Հայս քարոզութիւնը. բայց ըսինք թէ շատ ուշ շինուած զրոյց մըն է եւ ոմանք մինչեւ Ժ. դարու կը հասցնեն. և այդ մասին բոլոր Քրիստոնեայ եկեղեցիներն համամիտ չեն երբէք որքան ալ Օրմանեան ուղէ ըսել:—Թադէոս Առաքելո՞յնը. բայց անոր մասին ինքն ալ աւանդութեանց տարբերիլը կը տեսնէ ու չի գիտեր ո՛ր ամուրցնել իր դիտած եղբակացութիւնը:—Ժամանակագրական թուանշանները. բայց ինքն ալ կ'անդրադառնայ որ թուականներ եւ տեղեր... անլուծանելի վիճաբանութիւններու տեղի կու տան: Ուրեմն պատմական, ստոյգ ու անհերքելի աւանդութիւն մը չունի, որուն վրայ պատճառաբանելով հասնի ուղածին. այսու հանդերձ ինքն այսպէս կ'ուղէ և այդպէս ըլլալու է կը կարծէ: Քիչ անգամ հնար է հեղինակ մը ինքն իր բերնով ըմբերանել որքան այս պարագային կը պատահի Օրմանեանի: Թող ընթերցողք գատեն:

(Շարունակելի)



ՐՕՍԱ ՔԻԼԻՍԷԻ ՇԷՐԻՖԻՆՏԷՆ ՔԱՍՏԻԳ ՕԼՈՒՆՄԵՇ ՕԼԱՆ
ԷՐՄԵՆԻ ԳԱԹՕԼԻՔ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ
ԿԻԼԻՍԷԻԱ ՊԱՏՐԻԱՐԻԱՐԸ
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸՆ ԳՈՒԼԸ
ՕՆ ԻՒԶԻԻՆՃԻԻ ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ

Րէտուլանէ պիր զայրէթլէ մուալիմլէրիմիզ օլան, սէվկիւլիւ էվլասլարըւրզ
Աւագ թեմիմիզին ճագ. Ժողովդապետլէրինէ վէ միւնթէրէմ
Վարդապետլէրինէ սէլամ վէ թէպէրրիւֆեաթը բուհանիյէ

Մուագէզ Եվրասյաւ,

Ազիզ Րօմա Քիլիսասը իմթիյազաթը սէ-
մալիյէյի քէսիրէսի մէյանընտա, քէնտի միւ-
էսսիսի իլահիսինին Առաքեալարա խիթապէն
« Կիտինիզ պունտան պէօյլէ պիւթիւն հեթա-
նոսլարա էօյրէտինիզ... վէ պէն տիւն-
եանըն սօնուհա գատար սիզլինլէ պէրապէրիմ»
եօլունտա պույուրմըլ օլտըղը քէլամլար վա-
սիթասըյլա, բույի արզտա տէրիւհտէ էյլէմիլ
օլտուղը վազիֆէյի մուգատտէսէնին հիւսնի
իյֆասը իչուն նազղ ու իխլալը զայրը ճայիզ
օլան պիր հիւրրիյէթի ամէլ վէ իտարէյէ տէ
մալիզ օլմուշտըր: Քիլիսա թարիխինին շէ-
հատէթինէ նազարէն, արա սըրա նալայըզ
զուվվէթլէր, մուզլիմ մուհարէպէլէր զահիր
օլմուշ վէ օ հիւրրիյէթին սէլպինէ պէհուտէ
հէրէ ճէհտի ճէհէննէմիլէրինի սարֆ իթմիլ-
տիրլէր, Հալպու քի օ կէօնա թէարբուզ վէ
թէսալլութլար, հէր նէ գատար տա պիր տէ-
րէճէյէ գատար միւտսիլ վէ ուզուն օլմուշ-

լարսա տա, տէվամ իտէմէմիլտիրլէր. վէ Բը-
րիտոսըն ազիզ Քիլիսասը հիւրրիյէթի ապի-
յէսինէ պէ թէքրար սահիպ օլմաղա միւվէֆ-
ֆազ օլմուշ վէ հէնի պիր զայրէթ ու էհէմ-
միյէթլէ վազիֆէյի միւնճիյէսինի տէվամ իթ-
միլ վէ պիւթիւն ալէմին հայրէթինի մուհիպ
օլմուշտըր:

Ինքեարը զայրը գապիլ օլան պու հագի-
գաթ, պիզգաթ Քիլիսանըն պիտայէթի թէ-
էսսիւսինտէ պիլէ զահիր օլուր, Բուլթէրէսթ-
լիք, հէնի տօղմուշ օլան Քիլիսայը թա պէ-
շիքտէ իքէն քէնտի գանընըն իչինտէ պօղ-
մազ էմէլիյէ միւթէմատիյէն իւշ հիւզ սէնէ
հալաւսնլար իգա էյլէտի: Մա մաֆիյ, հե-
թանոս զալիմլէրին էն սօնրաքիսի վէ էն
զատտարը օլան Դիոկղետիանոս Իմբէրաթօր,
Իզնիմիտ մէյտանընտա « Քրիսթիանլըղըն
պիւթիւլիյէ լազլ ու իմհասը զիքրինէ » իքի
հիւքսէք ամուտ ըէքզ իթտիլի զէման, իա-

Թրքերն տան խայալըն տան պիլէ կէշմէգտի քի Բիլիսա եէր ալթը մէզարըզլարըն տան չըզըզ տա քէնտի հիւրրիյէթինին արէֆէսինտէ պուլունույօր: Չիւնքի 313 սէնէսինտէ Միւլան ֆէրմանը՝ իւշ ասարըզ հալաճանքըն միւնզարիզ օլտուղընը իլան իտիյօրտը:

Պու տէֆա, Բրիստոսըն սէվկիլի արուսէսի, քէնտի սէմավի կիւվէյիսինին հայաթընը, էվվէլ օնուն չարչարանքլարընը վէ պատէհու անըն միւնթէշմէ Յարուլթիւնըն սուրէթինի լամիաբաշ պիր սուրէթտէ քէնտի իւզէրինտէ թանղիր վէ թասվիր իտիյօրտը:

Պիր հիւնի թէսասիւֆ օլմագ իւզրէ, Բապարմըզ Յիսուս Բրիստոսըն Չարչարանքլարընա վէ Յարուլթիւնըն թախսիս իտիլմիշ օլան շու մուզատտէս կիւնէրտէ, Բիլիսանըն ըէյիսի էքրէմի վէ մուալլիմի ֆէթանէթչիայը օնունը Պիոս Բարա հազրէթլէրի, իշ պու Մարտըն 8 ինճի կիւնիւ, Պէօյիւք Կոստանդիանոս թարաֆընտան Բիլիսայա պախշ օլունան հիւրրիյէթին 1600 ինճի սէնէյի սէվրիյէսինի քէմալը չաշաա իլէ թագտիս իտէպիլմէք մագսատընա մէսինի, պիր Առաքելական Կոնզակ վասիթասըլա, պիւթիւն Գաթօլիք ալէմինէ պիր Յորեղեան Ներողութիւն իհան էյլէմիշ տիր: Պու Յորեղեանըն պիւծիւմէ Գաթօլիքլէրէ օլտուղը կիւլի, ճէմաաթըմըզ տախի մուճիպը մէմուռնիյէթ վէ մէսրուրիյէթ օլաճաղը թասիի տիր:

Գիւրապատիւ վարդապետէր վէ սէվկիլի ճէմաաթ, պու Առաքելական Կոնզակըն էհէմիլիյէթինի պիլ սէ նագարը իթիպարա ալարագ, ծնըն թէրճէմէսինին, հաֆթալըզ ըէսմի Արճապանգ զագէթամըզտա նէշրինի թէնսիպ վէ թէնպին էյլէտիք, իշթէ չիմսի տախի Աւագ թեմիմիզին պիւթիւն Յ. Յ. Ժողովրդապետէրինէ, մէզքիւր Կոնզակ միւնտէրիճաթընտան ճէմաաթա այլոտ օլան պաշըճա նօլթալարը, պա խուսուս Բաղար կիւնէրի պատարագ էմնատընտա շէրճ վէ իյզան էյլէմէլէրինի, վէ Բիլիսանըն, պու ֆէվզ էլ տտէ կիւնէրտէ հէր քէսէ թէվզի էյլէտիյի պախի նէճաթ իաղլինէլէրտէն իսթիֆատէյէ ճէմաաթլարընը տալէթ վէ թէշվիլ էթմէլէրինի էմր իտէրիլ:

Յորեղեան միւնասէպէթիլէ Գաթօլիք մէմալիքինտէ վէ պա խուսուս Գաթօլիքլիյին մէրքէզի օլան Բօմա շէհրինտէ պէօյիւք զիյնէթլէր իճրա օլունաճաղընը պիլտիյիմիզտէն, վէ ճէմաաթըմըզ տա, հիշ տէյիլ իսէ ուզագտան օլտուն, տիկէր Գաթօլիք գարտաշլարըմըզըն պու ասարը տէլալէթլէրինէ իշթիւրաղլարընը արղու իթտիյիմիզտէն, Աւագ թեմիմիզին պիլճիւմէլէ քիլիսալարընտա վէ ումուճա աշըզ օլան մատուղլարընտա պու Յորեղեանըն լայըլը վէճհ իլէ իճրա իտիլմէսինի միւրատ էյլէտիք: Իշթէ պու սէպէպէ մէսինի, Ս. Աստուածածինէ սուրուլմուշ Մալիս այընըն պիրինճի կիւնիւ օլան Համբարձում կիւնիւ, ճէմաաթըն էքրէրիյէթլէ մէվճուտ օլտուղը պիր սըրատա տինտարան թարաֆընտան սէճտէ իտիլմէք իւզրէ պիր սաաթ գատար Սրբութիւն սրբոցըն ի բազմոցի գօնուլմասընը, ումուճի տուալար իտիլմէսինի վէ պատէհու Սրբութիւն սրբոց իլէ Օրհնութիւն վէրիլմէսինի իշպու Կոնզակըմըզլա թանթը գարարա ալըր վէ օ ուրէթլէ իճրա օլունմասընը էմր իտէրիլ:

Օ կիւնիւ օլունաճագ տուալար շու աթիտէթիլէր տիր. 1. «Մայր սուրբ սքանչելի» տուալը. 2. «Վան Սրբազան Պապին մերոյ են. Տէր ողորմեա» իւշ քէրրէ. 3. Պէշ Հայր մեր, պէշ Ողջոյն վէ պէշ Փառք Հօր. 4. «Մայր Հաւատոյ» վէ սայիրէ:

(Մապաշի վար)

ՏԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՔԱՅԱՆԱՅ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՆԱՀԱՏԱԿ

ԺԱ.

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԱՐԴԱՐ ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆ
ԵՒ ՍՔԱՆՁԵԼԻՔ ՏԵԱՌՆ ԿՈՄԻՏԱՍԱՅ ՎԿԱՅԻՆ

(Շար.)

1795ին, Ասիոյ Կողմերէն Տիվրիկի Հայ մը, Եղիա անուն, որդի Քիլնի օղլու Հանի Յակոբի, հաղիւ քանուչորս տարեկան պատանի մը, ի ծնէ գոնջ էր և զլսուն վրայ ընաւ:

մազ չունէր։ Սա կը լսէր որ շատ մարդիկ Տէր Կոմիտասայ գերեզմանը կ'երթան և իրենց փափաքած բժշկութիւնը ստանալով կը վերադառնան, կը խնտար ու կը ծաղրէր, որովհետեւ էջմիածնական հայ ըլլալով չէր կրնար հաւատք ընծայել Տէր Կոմիտասայ հրաշքներուն։ Անանկ որ կ'ըսէր թէ եթէ Տէր Կոմիտասը իմ գլխուս վրայ մազ բուսցնելու ըլլայ, — զոր ինքն անկարելի կը դատէր, — ես ալ իր դաւանած կրօնքը կը դաւանիմ։ Այս պատանին այն ատենները ծառայութիւն կ'ընէր Ուղուրլու օղլու Ռաֆայէլ անուն Կաթողիկէ Հայու մը լսանք մէջ։ Տան մարդիկները Եղիայի այս միտքն իմանալով, զինքը յորդորեցին որ դիմէ Տէր Կոմիտաս վկային և ուզած շնորհքը ընդունիլ կարենալու համար՝ աղօթքով պատրաստուի։ Եղիան այդ բոլոր ըսուածները մտքին մէջ պահեր էր։ Ամիս մը ետքը չվարանեցաւ ստուգիլ երթալու Աստուծոյ ծառային գերեզմանը այցելելու։ Գնաց ու հոն պարտ ու պատշաճ եղանակաւ աղօթեց և տուն վերադառնալուն հազիւ երկու օր անցած էր, նշմարեց որ գլխուն մի քանի տեղերը մազ բուսնիլ սկսած էր։ Ասկից իր վատահաւթիւնը զօրանալով շարաթ մը վերջ կրկին գնաց Տեառն Կոմիտասոյ Վկային շիրիմը։ Վերադարձին մինչ տակաւին ճամբու վրայ էր մեծ զարմանքով եւ վախով վերահասու եղաւ որ գլուխը կատարելապէս կենդանի մազերով զոցուած էր։ Որով իրեն անկարելի երեւցող մեծ շնորհքին արժանացած ըլլալով, հաւատաց Աստուծոյ ծառային սրբութեանը և իր ըրած խոստմունքին հաւատարիմ գտնուելով, կաթողիկէ հաւատքը դաւանեցաւ։

Բրաբիոն, դուստր Մարգար օղլու Աթթինի և կողակից Պայիկ օղլու Յովհաննու, Հայ Կաթողիկէ հասարակութենէ եւ Ղալաթիոյ ընակիչներէն, տասնուկէ տարեկան Վիչէն անունով մանչ զաւակ մը ունէր, որոյ բթամատը եւ սրունքները ի ծնէ ծալուած էին։ Յիշեալ կինը 1796, Քունուար ամսոյ մէջ, առաւօտ մը աղօթք լրած ժամանակ յետին աստիճանի յուզուեցաւ այդ

զաւակին արտառնած անհամեստ եւ պիղծ խաւքերէն, — ինչպէս թշուառականը սովոր էր ընել ամէն օր. — և սրտանց Տէր Կոմիտասը օգնութեան կանչեց հառաչելով որ տղուն առողջութիւն շնորհելու բարեհաճի. և միանգամայն ուխտեց զայն իր գերեզմանը տանել։ Դեռ այդ խօսքերը բերանն էին երբ մեծ զարմացմամբ տեսաւ որ տղան ինքնիրեն ոտք ելլելով քայլ առ քայլ սենեակին մէջ քալել սկսաւ։ Եւ այսպէս հոս շարունակեց մինչեւ որ մայրը տամբնինգ օր ետք զինք Երանելոյն գերեզմանը տարաւ բեռնակրի մը միջոցաւ, ու հոն վայրիկ մը շնորհակալութեան աղօթքներ ընելէ յետոյ, երեք անգամ գերեզմանին շուրջը շրջան ընել սուաւ։ Տղան զգաց իր սրունքներուն վրայ ոյժ մը, որ հետզհետէ զինքը կը մղէր քալելու։ Նոյն վայրկեանին կատարեալ բժշկութեան շնորհը ստացած էր. շարունակեց ինքիւրեն քալել. քայց միշտ ալ ու ձախ ծռելով զաճաճներու պէս, որովհետեւ իր քնական կազմուածքն ալ այնպէս էր։ Նոյնպէս գերեզմանէ դառնալէն ետքը իր պղծախօսութեան չար ունակութիւններն ալ անհետացան եւ եղաւ կատարեալ հոգեւոր ու բարեպաշտ հաւատացեալ մը։

Անարոս Հաճի Միքայէլի դուստր Բիրիաքա, որ 1786ին, Ղալաթիոյ մէջ կաթողիկէ կրօնքը դաւաներ էր, քսան տարեկան ըլլալով 1793ին երկարատեւ լուսնոտ անգամալուծութենէ մը բռնուեցաւ, (épilepsie paralytique chronique) որուն կ'ընկերանային սրտի լարախմունք, յաճախակի ցաւք, ջրդային ձգտումներ եւ մարմնաւք։ Եւ երեք տարի ընդարմացած սրունքներով մնաց։ Դեղ չմնաց որ չզործածէ, սակայն ամէնքն ալ ի զուրբ։ Ուստի տեսնելով որ ա'լ իրեն համար նիւթակոն միջոցներէն օգուտ մը չկայ, կենդանի հաւատքով ու ամուլջ սրտով Տէր Կոմիտասի բարեխօսութեանը ապաւինեցաւ, ու 1797 Մայիս 7ին, իր ծանօթ մարդիկներէն չորս հոգի կանչելով պնդեց որ զինքը Տէր Կոմիտասի գերեզմանը տանին, եւ հոն համեղուն պէս սկսաւ եռանդաւոր աղօթել ու աղօթքէն անմիջապէս ետքը մարմնովը

գետնի վրայ սողոսկելով գերեզմանին շուրջը երեք անգամ շրջան ըրաւ, երրորդ շրջանին սրունքներուն վրայ ոյժ մը զգաց և առանց երկմտելու ոտք հլաւ, համարձակ կերպով քաշել սկսաւ, զարմանքի մէջ ձգելով բոլոր ներկաները:

1794ին, Ղալաթիոյ Հայ Կաթողիկէ հասարակութեան Հանրոժ օլլու Վերոնիքա առնուն մայրապետ մը, անպիսի հիւանդութիւն մը ունեցած էր, որոյ հետեւանքով մէջքը ծռած, սաստիկ նիհարցած եւ սրունքները ընդարձացած մնացած էին: Այնպէս որ երեք տարիէ ի վեր չէր կրնար ոտքի վրայ կայնիլ: Արդէն նա տարիէ մը ի վեր յոյսը կըտրելով ամէն դեղ ձգած եւ ինք զինքը կատարելապէս առտուածային կամացը յանձնած էր: Երբ սակայն լսեց 1797 Մայիս 7ին, վերոյիշեալ Քրիստոսի վրայ կատարուած բժշկութիւնը, որոյ հիւանդութիւնն ալ գրեթէ իրենին նման էր, վրան յոյս մը եկաւ որ ինքն ալ կրնար անպիսի բժշկութեան արժանանալ: Ուստի Երանելի Տեառն Կոմիտասայ բարեխօսութեանը ազաւինեցաւ կատարեալ հաւատքով մը և նոյն տարւոյ Մայիս 29ին, իր մօր, քրոջ և ուրիշ ծանօթի ձեռք Երանելոյն գերեզմանը տարուեցաւ: Հոն վայրիկ մը ջերմութեամբ համար աղօթել սկսած էր, զգաց իր վրայ տարօրինակ զօրութիւն մը և քաշելու անորոժ: չերկմտեցաւ, առաջին շրջանին հագիւ թէ սկսած էր այն կիներէ մէկուն օժանդակութեամբ մի քանի քայլ առնել, մէկէն ինք զինքը բժշկուած գտաւ ի մեծ զարմացումն ներկայ եղողներու:

Ապա նստաւ զինքը հոն բերող սայի վրայ իր ընկերներով, ու նեղուցը հաւակով անցնելէ վերջ ցամաք ելլելով ուրախութեամբ և հրճուանօք տուն վերադարձաւ:

(Շարունակելի)

ԵՐԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՏՕՆԱՑՈՅՑ

Ապրիլ 20	† Կիր. զմ. Տօն երեւման Խաչին
21	Բշ. զկ. Լ. or Յիւնաց
22	Գշ. դմ. ԼԱ. »
23	Դշ. զկ. ԼԲ. »
24	Եշ. աճ. ԼԳ. »
25	Ուրբ. ալ. ԼԴ. »
26	Շք. ղմ. ԼԵ. »

Ս. ՎԻՆԿԵՆՏԻՍ ՖԵՐՐԵՐԵՍԱՆ

(Շար.)

Մեծ եռանդ ու սէր ունէր իր Կանոնին համար: Որչափ ալ բազմազարդ ըլլար, բնաւ չէր թերանար խիստ կանոնապահութեան մէջ: Քառասուն տարի շարունակ, կերակի օրերն ի բաց առեալ, ժամպահ հաշիւն ըրաւ: Չորեքշաբթի և Ուրբաթ օրերը լսի հացով ու ջրով կ'անցընէր. իր անկողինը կազմուած էր յարդով ու խալիներով: Իր երեսասարդ հասակէն սկսեալ աւելի գիշեր անխափան լինքը զինքը կը ձաղկէր. և այնչափ խափը կը պահէր այս սովորութիւնը, որ իր հիւանդութեանը պատճառաւ իսկ բնաւ չընդմիջեց զայն: Աւետարանական ազգատուութեան այնչափ սէր ունէր որ կը յորդորէր զամենք զայն ընդգրկելու: Բազմութիւ հարուստներ՝ ամէն վիճակէ ու դասակարգէ, իրենց ինչքերը բաշխեցին աղքատներու, աղքատ Յիսուսի Քրիստոսի հետեւելու համար՝ ըստ նմանութեան իր ծառային Վինկենտիոսի: Հնազանդութիւնը այնքան սիրելի էր իրեն, որ երբեք չուզեց ընդունիլ ո՛չ մեծ տնտրութիւն և ո՛չ եկեղեցական պատիւներ: Վաղէնցիայի ու Լէրիտայի եպիսկոպոսութիւնները առաջարկուեցան իրեն. բայց նա գերադասեց մնալ պարզ կրօնաւոր և խոնարհ հպատակ քան հրամայող ու պետ ըլլալ ուրիշներու:

Շարունակական էր իր մտածականն ու աղօթքը. և Աստուծոյ ներկայութեան մտածութեան այնչափ ընտելացած էր, որ բնաւ երբեք իր միտքն ու սիրտը Աստուծոյ չէր բաժնէր: Միշտ խաչելութիւնը ձեռքը կը բռնէր կամ վզէն կախած կը տանէր իր Փրկչին: Չորաքանոց յիշատակը վառ պահելու համար. և զայն կը կոչէր իր մեծ Աստուածաշունչը. որովհետեւ անոր մէջ կը գտնէր ամէն գանձերն Աստուծոյ գիտութեան ու լուսնի՝ որոնք առատապէս ցանուած են Ս. Գրքին մէջ: Ամէն օր Ս. Պատարագը մատուցանելէ առաջ խոստովանանք կ'ըլլար. և Արքագործութեան ժամանակ՝ իր հոգին ողորդ շնորհաց օծու-

ճուտը իմիշ կիպի խաչա ըստ իմիշտիր-
լէր, վէ պու սուրէթլէ հաստէլէրինտէքի ար-
զույը շէհվէթին, մէքուհիյէթին քէֆարէթի
իչուն, միհէն ու մէշագգ չէքմէյէ միւսթա-
հագ օլտուգլարընը թանըմը, վէ հալընըզ
խայալ ալէմինտէ գալմայարագ մէյտանը ճիտ-
տիյէթէ տախի էնմիշտիրլէր, պահք իլէ,
ծոմ իլէ, տիւնհատէն չէքիլմէ իլէ, սէրթ
հաթագլարտա հաթմա, ճիւզի ուլգու ուլու-
մա, տախի պիր իշթիզալ իլէ, էնզարը ա-
ֆիթէ իլէ, գրաաթը բուհանիյէ իլէ, քէնտի-
լէր կիպի ազայը տինտարանտան միւրէքքէպ
ճէմիյէթլէր արամա իլէ, հիւմնի իխթիյարաւ-
րըյա մահրումիյէթլէր, աճըլար վէ մէշագ-
գաթլար իլթիզամ իթմիշտիրլէր: Սուրբլար
տահա իլէրի կիթմիշտիրլէր, քէֆարէթի ա-
տիյէտէն մատա, տիւնհանըն կիւնահլարը ու-
զուրընա խաչլանմը Յիսուսա տահա զիյատէ
պէնդէմէք իչուն, թէսաւվուր իտէպիլտիք-
լէրի հէր շէյի հարմըշտըրլար:

« Իշթէ, սէվկիլի էվլատըմ, սիզ տէ օ-
րայա պագմալընը: Էյէր տիւնհայա պա-
գաճագ օլուր իսէնիզ, տիւնհա, բութքէրէսթ
մապէտլէրինին պիր վագըթ իրայէ էյլէտիյի
կիպի, սիզէ նաբագ սուրէթլէրտէն պաչգա
պիր շէյ կէօսթէրէմէզ, պիլաքիս, պիլճիւմէ
մէսամաթըն արասընտան հաստէլէրինիզի իզ-
ֆաւա չալըլաճագ տըր: Պիզզաթ ճիսմինիզ
պիլէ, էյէր ծոա թապիլաթըն վէ կիւնահըն
վէրմիշ օլտուղը հալէ նազար ցըլաճագ օ-
լուրսանըզ, սիզի պաչտան չըգարաճագ պիր
մէնզարէ ինզար էյլէր: Հալպու քի, իւրիան,
հարալը, պէրէլի, գանա միւլէմմա, աճընըն
վէ հագարէթին հէր տիւրլի նէթայիճինէ հէ-
տէֆ օլմուշ օլարագ խաչտան ասըլմըշ օլան
Յիսուս Բրիստոսա պագաճագ օլուրսանըզ
մէհապպէթ գուրպանը օլան խէլասքեարըն
խաչընա նազար ցըլաճագ օլուրսանըզ, օրա-
տան, սիզի պիւսպիւրթիւն թէպտիլ էտէճէք
օլան գոււվէթլէր ալըրսանըզ: Միւսթահագգը
օլտուղընըզ ճէզանըն թէխաթթուրը, խայալ-
խանէի ֆիքրինիզի թաթհիր իտէճէքտիր:
Վիճուտընըզ, գամըլարա վէ խաչա մահքիւմ
իտիլմիշ պիր էսիր վիւճուտը կիպի, պուչագ
վէ աթէշտէն մատա պիր շէյէ լայըզ օլմայան

պիր քէֆարէթ գուրպանը կիպի կէօրիւնէ-
ճէքտիր: Օնը գապուլ իթմէսի իչուն Ալլահա
տուա էյլէյէճէքսինիզ: վէ պու գուրպանըն
հէման պիր մուգատտէմէսի օլան ըֆիթէթ վէ
բագլըզ, նազարընըզտա, միւսթահագ օլ-
տուղընըզ ճէզայա, Յիսուս Բրիստոսըն չէք-
տիյի էզիյէթէ, տիւնհանըն պիտայէթինտէն
պէրի պուհա քիմսէլէրին չէքմիշ օլտուգլա-
րը զահմէթլէրէ նիսպէթէն բէք ճիւզի պիր
մահրումիյէթ կէօրիւնէճէք տիր:

« Փագըրլարա, ալէլէյէ, թարլալարըմը-
զըն չիթթիլէրինէ պագընըզ. օ նէ, էօմիւր
տիր, Ազիզիւմ. սայ քի պէնի պէշէրին քեաֆ-
ֆէսինին տէ էօմիւրի սօղուգ, սըճագ, աճըզ,
չըպլագլըզ, խասթէլիզ կիպի տահա պիր թա-
զըմ սէֆալէթլէր տայիմա խաչլամագտաւըր-
լար: Միլիծնլարճա քիմսէլէր, հաւատան,
զընտոան մահրում մահպէսլէրտէ տիրլէր:
Տիկէրլէրի զընտան քէօշէլէրինտէ զէնճիլէ-
րին պարը կիրանը ալթընտա էզիլմէքտէ տիր-
լէր: Պազիլէր չըր չըպլագ գամը տարպէլէ-
րինէ մահքիւմ իտիլմիշ, պիր գըամը, խաս-
թէլիք թապիր օլունան ինսաֆսըզ ճէլլատլար
էլինէ տիշմիւշ խասթախանէլէրտէ ահ ու է-
նին չէքմէքտէ տիրլէր: Իշթէ ինսան տէնի-
լէն մախլուգ: Սիզտէ պու ինսանսընըզ, ահ-
ճագ քի սիզ կէնճալինիզ վէ հիսսէնիզէ տէ,
էսկիլէրին թապիրի իւզրէ, հաւէր պիր թալի
խապէթ իթմիշ տիր: Շու հալտէ, բէք չօգ-
լարընըն մահրում օլտուղը շէյլէրէ սիզին շու
մալիքիյէթինիզ միւմթագընտա, թէնինիզի
նէ՞ հարընտընըզ: Սիզ ծնը, սիւֆլա, ութա-
նըլաճագ, գոււվէթինիզի քէսէն մահգուզի-
յէթ վէ շէհէվաթա, գատըրընըզ թէնզիլ էյ-
լէյէն, սիզի Ալլահտան թէպիտ իտէն վէ շա-
յէտ, ալէնի օլալար, ծնլարտան հէր պիրի
տիւնհա ալէմին նէֆրէթինի մուճիպ օլապի-
լէճէք զէվզ ու սէֆայա, էյլէնճէլէրէ ալէթ
իտիյօրսընըզ:

« Պու պէրպատ հօլը թէրք իթմէնիզի Ալ-
լահ սիզտէն թալէպ իտիյօր: Օ սիզէ էյի
տօսթլար վէրմիշ տիր. անլէրին նէսայիհի
խայրխահանէլէրինի տինլէյինիզ, վէ սիզէ
գալպ բագլըզ վէրմէսի իչուն տախիմա ճէ-
նտուլը Հագգա նիյազ էյլէնիլիզ: Դաւիթ

Մարգարէ իլէ պէրապէր սիգ տէ տէյնիդ . «Սիրտ սուրբ հաստատեա՛ յիս , Աստուած , և զհոգի ուղիղ նորոգեա՛ ի փորի իմում » : Պախուսուս , գաթիի իւմիտ օլմայընը : Ֆազիլէթ , քէնտինի արսեան գալպէր իշինտէ եաւալաշ եալաշ պէօյսը , Փապաթ նէշվ ու նէմա պուլուր : Շիմտիյէ գատար վազը օլմա տիւշիւշէրինիլին , խոստովանանք վէ ապաշխարութիւն վասիթապըլա քէֆարէթինի չէքինիդ : Քէնտի քէնտինիդէ հիւանի իխթիյարընըզլա ապաշխարանքլար գօյունը : Չօդ տէֆա հաղորդութիւն ալընըզ . էյի քիթապլար միւթալէա իտինիդ : Ուիւլասէ , Ալլահը սէվինիդ , իշթէ պու մէհապպէթ գալպինիլի թաթհիբ վէ սիգի թախլիս էյլէյէճէք տիր : « Սէվկիլի էվլատըմ , պէօյլէ օլապիլմէսի իշուն Ալլահա տուա իտէր վէ սամիմանէ սիւզի տէր աղուն էյլէրիմ :

" Ֆ. ՀԱՆՐԻ - ՏՕՄԻՆԻԲ ԼԱԲՕՐՏԷՐ
գաւ. Բարոզիչ Նորարց , ,

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ռ Ո Ս Ե Ի Կ Վ Ք Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Հ

Երկար ունկնդրութեանց հետեւանքով՝ Ս. Քա-հանայապետը, որ դեռ բարորդին ապաքինած չէր, անհանգստութիւն մը ունեցեր է, և բժիշկներուն հրամանաւ հարկադրուած է հանգիստ ընելու. վիճակը երբեք մտահոգութիւն չի պատճառեր :

Նուիրական պարտք մըն է ամէն կաթողիկէի՝ եռանդադին աղօթել և խնդրել Աստուծմէ որ արագ և կատարեալ ապաքինում պարգեւէ Ս. Հօր :

*. Բակոնէզի Գերապայծառը, Սպանիոյ առաքելա-կան դեպանը, Մատրիս մտաւ մեծ հանդէսով. տմբողջ ժողովուրդը զինք ողջունեց գոչելով. ԿԵՅՅԷ՝ ՔԱ-ՀԱՆԱՅԱՊԵՏԸ, ԿԵՅՅԷ՝ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱ-ՊԵՏՈՒԹԻՒՆԸ :

Բակոնէզի Գերապայծառը թագաւորին մատոյց իր ընծայագիրը. ներկայ էին Սպանիոյ արքայազունք և պալատին բոլոր նախարարները և բարձրաստիճան պաշտօնեաները : Քահանայապետական դեպանը բա-նախօսութիւն մը ըրաւ, որուն մէջ յայտնեց Ս. Քա-հանայապետին՝ Սպանիոյ նկատմամբ ունեցած հա-րական զգացումները. ակնկալութիւն ցոյց տուաւ որ իր պաշտօնավարութիւնը թէ՛ Ս. Գահին և թէ՛ Սպա-նիոյ համար գոհացուցիչ արդիւնքներ յառաջ պիտի

բերէ. աւելցուց թէ իր բոլոր ջանքերը այս նպատա-կին պիտի ձգտին. և մաղթեց որ Սպանիոյ և Ս. Գա-հուն միջև եղած բարեկամական սերտ յարաբերու-թիւնները աւելի եւս ամրապնդ հաստատուին :

Թագաւորը հակիրճ պատասխանով մը յայտնեց իր որդիական յարգանքը՝ նկատմամբ Ս. Գահին, իր յոյ-սը՝ անոր աջակցութիւնը վայելելու. և խոստացաւ Ք. Գեպանին որ թէ՛ ինք և թէ՛ իր նախարարները տ-նոր ձեռնտու պիտի ըլլան :

Այս արարողութիւններէն յետոյ Բակոնէզի Գերա-պայծառը ողջունեց Վիքթորիա և Քրիսթինա թա-գուհիները, և գնաց անմիջապէս ներքին գործոց նա-խարարութեան պաշտօնատեղը՝ և սպանիական կա-ռավարութեան՝ իր պաշտօնական այցելութիւնը տուաւ :

*. Վիէննայի Արքեպիսկոպոս անուանուեցաւ Բիֆֆլ Գերապայծառը, որ առաջ վերատեսուչ էր Գլխաթէնէնպուրկի Օգոստինեան կրօնաւորաց կանոնի-կոսաց ժողովին :

*. Հռոմի քահանայապետական փոխնորդ ան-ուանուեցաւ Բոմբիլի Կարդինալը, ընդ Ումարիացի Միած է 1868 ին Սրդէթի մէջ. ուսմունքը առած է Հռոմ, նախ Վատիկանի՝ ապա Հռոմէական կղերա-նոցներուն մէջ : Քահանայ ձեռնադրուեր է 1888 ին և այնուհետեւ կարեւոր պաշտօններ վարեր է :

1911, Նոյեմբեր 27ին կարդինալական պատուոյն բարձրացաւ և կարգուեցաւ անդամ եկեղեցական ար-տաքոյ կարգի գործոց ժողովին :

Բոմբիլի Կարդինալը ունի ազնիւ և հոյակապ ընական կազմուածք մը, որ իր հոգւոյն ընտիր հան-գամանքներուն արտափայլումն է :

*. Գանատայի մէջ 1901էն մինչև 1911 աւելցիր է 605,440 Կաթողիկէ : Կաթողիկէները տեղւոյն ընտկչութեան նկատմամբ 41 առ հարիւր են. մինչդեռ Անկիլիկանները 43, Մէթոսիսները 47, Երեցականք 45, Մկրտականք 8 առ հարիւր :

Գանատայի Բողոքական և ուրիշ աղանդներու թիւը 75 ի կը հասնի :

Ներկայիս Գանատայի մէջ կը գտնուի 2,633,044 Կաթողիկէ. 1,415,324 երիցական. 1,079,892 մեթո-սիս, 1,948,041 անկիլիկան. 382,666 մկրտական. 74,564 հրեայ, և սակաւաթիւ ուրիշ աղանդաւորներ :

*. Մասրիս. — Ապրիլ 13ին, երբ Ալֆոնս Թա-գաւորը զօրանքէ մը կը գառնար և կ'անցնէր Սպա-նիոյ պանքային առջեւէն, յանկարծ երիտասարդ մը հրազենի երէք հարուած պարպեց : Թագաւորը չվը-նասուեցաւ և ողջ առողջ է. ստիկան զինուոր մը սուրի հարուածով վիրաւորեց և ձերբակալեց երի-տասարդը. որ կը կոչուի Ռոֆուայէ Սոնխէս Ալէկրօ, ընդ Պարսիկոնոցի, Ֆրանսայէն վատրուած իր ա-նիշխանական թագաւորը կէսօրէն կտրք ժամը 1.45ին պալատ դարձաւ. ժողովուրդը խանդավառօրէն ծա-փահարեց զինքը :

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ

Ամենապատիւ Հոգեւոր Տէրը Շրջաբերակա- նով մը պատուիրեց Աւագ Թեմի բոլոր ժողովրդա- պետներուն որ եկեղեցւոյ մէջ ազօթքներ մատուց- ուին Ս. Քահանայապետին առողջութեան համար:

*. Ամենապատիւ Հոգեւոր Տէրը Հոգեւորական Թուղթով մը Աւագ Թեմի մէջ հրատարակեց Յորեւ- եան լիակատար ներողութիւնը, զոր Պետո ժ. Ս. Քա- հանայապետը շնորհեց՝ Բրիտանիոյ թեմի յաղթանա- կին ժ. Զ. հարեւամեակին առթիւ:

*. Հոգեւոր Տէրը Վ. Մէրի տէլ Վալ կարդինա- լին հեռագիր մը ուղղելով Ս. Հօր առողջութիւն մաղթեց և ընդունեց հետեւեալ հեռագիրը.

Հռոմ, 16 Ապրիլ

ԱՄԵՆ. ԹԷՐԱՅԱՆ

ՊԱՏՐԻԱՐԻ ՏԱՆՆ ԿԻՆԻԿԻՈՅ

Լ. Պալիս, Ռեհա

Մերազան Հայրը արագին ճորհակալութիւն յայտ- նելով, կու տայ առաքելական օրհնութիւն:

ԿԱՐԴ. ՄԷՐԻ ՏԵՒ ՎԱՆ

*. Արհիպատիւ Աւետիս Արքեպիսկոպոս Ար- փարեան, Մէմֆիսի շոգենաւով Հռոմ մեկնեցաւ հինգշաբթի օրը՝ Ողջերթի գայլին Արհի. Արհի. Ե- պիսկոպոսներ և Գեր. Գեր. Վարդապետներ և իր ծա- նօթները:

*. Գեր. Յովսէփ Վ. Սարուխանեան անուան- ուեցաւ հոգաբարձու Ս. Երրորդութեան եկեղեցւոյ:

*. Սուտերու, սխալներու վարժուած Մէմֆուան՝ Արհի. Արքեպիսկոպոս Արք. իւրեւ թէ բացած ու վա- րած դատին նկատմամբ բնաւ չի խղճեր յօդուած մը գրել, շուրջ երեք սիւնակ, որուն մէջ բնաւ ճշմարտու- թիւն չկայ և գլխէ գլուխ սուտով լեցուն է: Մենք աս դէպքին մանրամասնութիւնները արդէն գրած էինք (Թիւ 79, էջ 63): Գիտենք, այս՝ թէ իրենք կ'ուզեն ընել ու բոլոր ամէն ապօրինութիւն ու սուտ, ամէն նախատիք ու անխղճութիւն. և կը պահանջեն որ Կ. Արձագանգ լռէ, որպէս զի համարձակ գործեն. Զի ամենայն ուր զչար գործէ ասեալ զլոյս, եւ ոչ գալ առ լոյսն, զի մի՛ լանդիմանեցին գործք նորա (Յովհ. Գ. 20):— Բայց կարելի բան է որդ. Կ. Արձագանգ միշտ հաւատարիմ պիտի մնայ իր պարտքին, և եթէ յանդիմանի նախատուի ալ, ինչ փոյթ:

Արգ. 1. սուս է հիմնական պատուութիւնը. այդ մէջի երկտասարգը եկեղեցւոյ մէջ չէ արտասանած եւ ոչ իսկ բառ մը, (ի բաց առեալ ճորհեա՝ Տէրի կեղծ խռատը), և հետեւաբար Արհի. Արքեպ. չէ պա- տասխանած անոր եւ ոչ իսկ լաւով մը. Մէմֆուային ասոնց վերագրած անկի ճառերը կատարելապէս յե- րիւրեւած են, ինչպէս Սերգիսեան կը յերեւեր՝ Թեմա արուեստով:— 2. Սուս է թէ Արհի. Արքեպ. դատ բացած է այդ մէջի երկտասարգին դէմ. ուստի

կանուածեան տուած տեղեկագրին վրայ՝ ընդհանուր դատախազութիւնն է որ դատ բացեւ է, և ոչ ոք լուր ունէր, մինչեւ այն վայրկեանը՝ երբ դատարանէն եկաւ կոչնագիրը որուն նախ Լր. հպատակի՝ պահան- ջուած վկայութիւնը տուաւ համար. ասա՛ եղելութիւն- նը:— 3. Սուս է թէ Արհի. Արք. և դպիրք փախած են աւանդատուն. դատը դատուողներէ ոմանք եկեղեցիէն դուրս վտարած են այս յանդուգն և անիրաւ երկտա- սարգը, և ազօթքը շարունակուած է:— 4. Նողկալի են այդ արգելեալ թերթին այս առթիւ երկայ- նարանած դիտողութիւնները, մանաւանդ Արհի. Ար- քեպ. չէ այդ սրբապիղծին հետ՝ իւր նշնքան մեղա- պարտ զուգագրելը... Ապա... այս սուտ հիմերու վը- րայ կը կուտակէ նախատիք, դատապարտութիւն- ներ, ձազկանք, ձրի ենթադրութիւններ, խրատարա- նութիւններ, միեւնոյն ոճով անհիմար և անվերջ:

Այսքան ուզուած ստիստութեան շարք մը ինչ նպատակ կրնայ ունենալ. կարելի է՝ պաշտպանել — ինչպէս անարկութիւններէն կ'ընդշմարտուի — այդ շարագործ երկտասարգը, վստիկ գլխաւոր պատասխա- նատուութիւնը իրենց խղճին վրայ կը ծանրանայ, կը զգան զայդ անշուշտ և խղճը կը խօսի անպատճառ. — բայց ամէնէն աւելի կ'ուզէ վարկաբեկել պատ- ուաւոր և համարուած ու համակրութիւն վայելող բարձրաստիճան եկեղեցական Արքեպ. մը, և ինչու... որովհետեւ, նա իր պարտքը կը կատարէ, Ս. Քահա- նայապետի որդմանց կը հպատակի, ճշմարտութիւնը կը խօսի, և ըմբոստներուն համակարծիք չէ:

Ալ չի՞ բաւեր արդեօք այսքան՝ անխղճութիւն մեր ամէնէն յարգելի եպիսկոպոսները ոտնակոխել և նշաւա- կել՝ կառավարութեան առջեւ, օտար ազգերու առ- ջեւ, Յոյներու առջեւ՝ որոնք իրենց նշնք իսկ յանցա-ւորները կը պարտկեն. որոնք մերկներուն անարգած նախատած անձերը՝ այսօր իսկ մեծապատիւ կը մե- ծարեն:

Վա՛յ, այս է եղեր ազգասիրութիւնը, տա՛նք են եղեր ազգին իրաւունքները. ա՛յսպէս կ'ըլլայ եղեր զանոնք պաշտպանել...

Զարմանք, նողկանք, ցաւ:

*. Սուտերու գործատուն դարձած Մէմֆուա՝ վերջերս հրատարակեց թէ՛ Մարգուանի ժողովը դի- մեր է վարչական ըսուածին և իր պաշտօնական հաւ- տատուած խնդրեր է: Այս զրոյցը մեծ զարմանք և զայրոյթ առթեր է Մարգուանի մէջ, ուրկէ կը տե- ղեկագրեն մեզի թէ անհիմն է այդ և շինծու: Եւ եթէ այդպիսի դիմում եղած է, լոկ երկու երեք սին- լարը կամ կեղծանուն կամ սուտուած շինել ուղղող անձերու կողմանէ է: Արգ. մէկ երկու այդպիսի խը- ուովարտ, սոսկական անհասներէ ժողով կ'ըլլայ ե- ղեր, և ինչ տիտղոսով, որո՞ւ քուէով... Տեղւոյն ամ- բողջ ժողովուրդը իր եկեղեցւոյն, իր Առաջնորդին յարած է կաթօգին՝ հակառակ Պալիս և Տրապիզո- նէն անդադար տեղի ունեցող գրգռութիւններուն, և յաւակապէս մեղմել սագրանքներուն Մէմֆուայի որ

առանց բաժանորդ ունենալու կը տեղայ հոն առա-
տօրէն:

* Պատրիարքարանը յանիրաւի գրաւող ըմբոստ-
ները, ինչպէս անցեալները, նոյնպէս վերջերս ալ հա-
կառակ բնական, դրական օրինաց և ամենատարբա-
կան պարկեշտութեան կանոնաց, բացեր, կարգացեր
են Ամեն. Տիրոջ անձնական նամակները: Արարք սառն,
պժգալի, յայտաշահ փորձիսութեան ըմբոստներուն:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Մեծ Տէրութիւնը հետեւեալ կերպով պատաս-
խանեցին Պալքանեան Դաշնակիցներուն պատասխան-
ծանուցադրին.

Տէրութիւն գոհութեամբ ի նկատի կ'առնուն դա-
նակից պետութիւններու սրամադրութիւնները՝ բեմա-
ւորութիւններու դադարման համար, եւ հետեւեալ կեր-
պով կը պատասխանեն դաշնակիցներուն ծանուցագրին
չորս կէտերուն. Ա. կէտը՝ առարկութիւն չի յարուցա-
ներ: Բ. կէտին մասին տէրութիւն գիտի կու տան թէ Ե-
գեականի կողմներուն վիճակը վերապահուած ըլլալով
տէրութեանց գնահատութեանը՝ այս կէտը կրնայ ընդուն-
ուիլ լոկ այն կողմներէն ոմանց մասին տէրութեան կող-
մէ տուելիք որոշման վերապահութեամբ: Գ. կէտին
մասին տէրութիւն կը յայտարարեն թէ՝ պատրաստ են
այժմէն յայտնելու դաշնակիցներուն՝ Ալպանիոյ հիւսի-
սային եւ հիւսիս-արեւելեան սահմանները, իսկ հարա-
ւային եւ հարաւ-արեւելեան սահմանները պիտի հա-
ղորդուին որոշուել անմիջապէս վերջը: Դալով Դ. կէ-
տին, ելմական բոլոր խնդրոց կարգադրութիւնը վերա-
պահուած է Բարիզի Յանձնաժողովին, բոլորն պիտի
մասնակցին պատերազմիկներուն պատուիրակները: Տե-
րութիւն պնդել կը նկատեն թէ տեղի չկայ այժմէն
կարծիք յայտնելու պատերազմ. տուական խնդրոց վրայ:

Մ. Կէտով յայտարարեց թէ պիտի խորհրդակցի
զինակիցներուն հետ:

Տակաւին յայտնի չէ թէ զինակիցները ինչ ընդու-
դունելութիւն պիտի ընեն տէրութեանց այս նոր յայ-
տարարութեան. բայց ամէն նշաններէ կ'երեւայ որ
այդ ընդունելութիւնը նպատաւոր պիտի ըլլայ, նը-
կատի առնելով մանաւանդ որ զինակիցներէն՝ Պուլ-
կարիա և Սերպիա լաշի չափով գոհացում կը ստա-
նան իրենց պահանջներուն, և Յունաստան ալ կողմ-
ներէն մէկ քանիքին համար միայն վերապահուածներու
կը հանդիպի տէրութեանց կողմէ:

* Շքարայի մասին օմ. գործակալութիւնը
Ապրիլ 5 թուականով կը հաղորդէ հետեւեալ տեղե-
կագիրը.

Տէրութեանց պահանջին վրայ սերպ կառավարու-
թիւնը հրաժարած ըլլալով տարմանակիւ Շֆոսայի ռըմ-
բակոծումը ու պատարումը, օմ. կառավարութիւնը
հարկ եղած հրամանները տուաւ Շֆոսայի հրամանա-
սարին՝ հրաւիրելով զայն սերպ հրամանատարին հետ
կարծիքներու փոխանակութենէ մը ետք, դադարեցնելու
կրակը պատարող զօրին դէմ, եւ զանոնք չհետապնդե-
լու ֆիոյն իսկ եթէ անոնք նահանջին:

* Կ'ըսուի թէ Գարատաղի թաղաւորը գահէն
պիտի հրաժարի՝ եթէ չյաջողի ստանալ Շքարայի,
զոր ինք անհրաժեշտ կարեւոր կը նկատէ Գարատաղի
անկախութեան համար:

* Պիլիպի մէջ Ապրիլ 13ին անձանութի մը կող-
մէ գործուած ոճիք մը Հայոց վերադարձելով, Թուր-
քերը գրգռուած ու վերաւորած եւ սպաննած են չորս
հոգի, ժողովուրդը աջ ու զոյլ մէջ է. օգնութիւն կը
խնդրուի հեռագրով:

* Կը հաւատաւոր թէ Պուլկարներուն շինած
ամրութիւնները և բերած խոշոր թնդանութիւնը փո-
խած չեն Չաթալճայի զինուորական կացութիւնը՝ ի
նպատ իրենց: Նոյն միջոցները և աւելի աղէկ ձեռք
առնուած են օմ. բանակատեղւոյն մէջ: Օմ. ձեռն-
հաս չըջանակներու մէջ կը յայտարարուի թէ Չա-
թալճայի գիծը անառիկ է, հակառակ Պուլկարնե-
րուն տեսած բոլոր պատրաստութիւններուն:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Դէպքեր եւ սկզբունքներ	241
Ժ. Բարիւրամեակ Բրիտանիոյ յարաբանակին	243
Օրմանեանի «Հայոց Եկեղեցի» գիրքը	245
Թուրք հովուական	248
Տէր Կոմիտաս Բահանայ	249
Եօթնեակ Բրիտանիոյ	251
Հ. Լազոսէրին պիւր մեքուպը	352
Տեղեկագրական	254

ԱՐՏՕՆԱՏԵՐ

ՅՈՎԶ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՍԳՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպագր. Ե. Արծաղանց Շաքաբաքերի, Բերա, Պայրամ փողոց քիւ 5, Կ. Պոլս

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Թուրքիոյ համար, տարեկան՝ 40 դնկ. արծ. վեցամսեայ՝ 20.—
մէկ թիւ՝ 1 դնկ.:— Արտասահման՝ տար. ճր. 10. վեցամս. 5.—Վնարմունք կանխիկ են:
ՀԱՍՑԵ.— Կարողիկէ Արձագանգ, Բերա, 5 Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ.— 1.—Արձագանգ կը նրաստարակուի Շաքաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատեհաւ կամ նոյնութեամբ նրաստարակել իրեն ղրկուած ու եւ է յօդուած: 3.—Կեղծանունով ղրկուած յօդուածներու հեղինակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրութեան: 4.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու ձեռագիրները պէ՛տ է գրուած թղթին մէկ կողմը միայն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէ՛տ է անհրաժեշտ երկու դանեկանի նամակադրում ի միասին ղրկել:

ՏՊԱՐԱՆ Կարողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայնի նոյն եւ ի վիճակի է որ եւ իցէ տպագրական՝ գործոց համար: Կը տպուին ամէն տեսակ ծանուցումներ, զիրքեր, տեսքներ, հրաւիրագիրներ, քարտեր, քարտ-տետրեր, մանագրներ, եւն., եւն.: Գիրքեր անմեղեղի կերպով ածան են: Գեղեցկագիտական նաւակի եւ տպագրական մատուցեան կողմանէ յանձնարարները անտարակոյս զոն պիտի մնան:

ԿԸ ԾԱԽՈՒԻ «Տարեկան Սկզբունք Բիւստանէական Վարդապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Գին, ամուր թղթակազմը 2 դնկն.:
